ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5686-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1223-2020 գրության հիման վրա, 16.04.2020թ. թիվ 26/26-1/5686-2020 գրությամբ նախաձեռնել է «Վիշկա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վիշկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Վիշկա» ՍՊ ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 20.04.2020թ գրությամբ հայտնել է, որ 11.02.2020թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանվել է 25.03.2020թ.:

Ընկերության կողմից վերը նշված ընթացակարգի շրջանակում ներկայացվել է հայտի փաթեթ, որից բխող պարտավորություններ ի հայտ գալու դեպքում, դրա կատարումն ապահովելու նպատակով ներկայացվել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված բանկային երաշխիք՝ 21.000.000 (քսանմեկ միլիոն) ՀՀ դրամի չափով:

Վերը նշված մրցույթն անցկացվել է էլեկտրոնային եղանակով: Ընկերության կողմից բանկային երաշխիքը (բնօրինակից սկանավորված տարբերակը) «ARMEPS» համակարգի միջոցով ներկայացվել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (հետայսու նաև՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի կողմից գնումների ընթացակարգի համաձայն՝ սահմանվել է պայման, համաձայն որի բանկային երաշխիքի բնօրինակը պետք է հաջորդ աշխատանքային օրը՝ մինչև 17:00-ն, ներկայացվի Հանձնաժողովին: Նշված պահանջը սահմանվել է նաև հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի 4-րդ ենթակետով:

Ընկերությունը նշել է, որ Հանձնաժողովի նման պահանջը հակասում է 04.05.2017թ. ՀՀ Կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 7-րդ մասի 32-րդ կետի «դ» ենթակետին, այն է՝ եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ, եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած, ապա սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնում է դրա բնօրինակը: Այսինքն՝ մասնակիցը բանկային երաշխիքի բնօրինակը ներկայացնում է հանձնաժողովին, եթե ճանաչվել է հաղթող մասնակից, և պատվիրատուն նրան պայմանագիր կնքելու առաջարկ է ներկայացնում:

Ընկերությունը հայտնել է, որ առաջնորդվելով իրավական գերակա դիրք ունեցող Կարգի պահանջներով, ինչպես նաև ամենայն պատասխանատվությամբ վերաբերվելով

ՀՀ Պարետի կողմից հնչեցրած բազմաթիվ կոչերին՝ մասնավորապես՝ հնարավորինս սահմանափակել փաստաթղթաշրջանառությունը և հնարավորության դեպքում անցնել աշխատանքի կազմակերպման առցանց ռեժիմի, Ընկերության կողմից բանկային երաշխիքի բնօրինակը չի ներկայացվել Հանձնաժողովին:

Ընկերությունը նշել է, որ վերը նշված փաստական և իրավական հիմնավորումներից պարզ է դառնում, որ ի սկզբանե Հանձնաժողովի հրավերը կազմված է եղել ՀՀ Կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված իմպերատիվ պահանջների խախտմամբ:

Հանձնաժողովը, անտեսելով վերը նշված ենթաօրենսդրական ակտի պահանջները, մերժել է Ընկերության հայտը՝ դրա մերժման հիմքում դնելով կամայական իրավական հիմնավորում: Բանկային երաշխիքի բնօրինակը չներկայացնելու պայմանով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը մերժելիս Հանձնաժողովը պետք է հղում կատարի Կարգի 41-րդ կետին, այն է՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է Կարգի 42-րդ կետով, այն է՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է: Այսինքն՝ հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժելիս չի պահպանվել ՀՀ օրենդրությամբ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ Կառավարության N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով սահմանված պահանջները, այդ իսկ պատճառով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի ուժով անձինք չեն կարող կրել իրավունք և պարտականություն:

Ընկերությունը հարկ է համարել ընդգծել այն փաստը, որ Հանձնաժողովը ներկայացված անհամապատասխանության մասին չի ծանուցել Ընկերությանը: Ուստի Ընկերությունը Հանձնաժողովի կողմից առաջ քաշված անհամապատասխանության վարկածը շտկելու հնարավորություն չի ունեցել՝ իր կամքից անկախ պայմաններում:

Ընկերությունը էլեկտրոնային նամակագրության միջոցով դիրքորոշում է հայտնել Հանձնաժողովին առ այն, որ համաձայն չէ Հանձնաժողովի ընդունած որոշման հետ և ներկայացրել է դիրքորոշումը հիմնավորող փաստական և իրավական հիմնավորումներ:

Սակայն, Հանձնաժողովը, անտեսելով բերված փաստական իրավական հիմնավարումները, շարունակել է կատարվող օրինախախտ գործողությունները: Մասնավորապես՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունցեող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջով, որը, համաձայն Ընկերության դիրքորոշման, չունի ոչ մի տրամաբանական և իրավական հիմնավորում:

«Վիշկա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/84 ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 14.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1223-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Վիշկա» ՍՊ ընկերությունը: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել 25.03.2020թ.: Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4.3 կետի 4-րդ ենթակետի և 2-րդ մասի 2.5 կետի համաձայն՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում

ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.»: «Վիշկա» ՍՊԸ-ն հայտով էլեկտրոնային գնումների armeps.am համակարգով որպես հայտի ապահովում ներկայացրել է բանկային երաշխիքի արտատպված (սկանավորված) տարբերակը, սակայն մինչև 26.03.2020թ., Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 08.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի շրջանակներում 29.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի և արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***<u>12.02.2020թ.</u>***:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***<u>02.03.2020թ.</u>***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5686-2020 գրությունը, ՀՀ ՊՆ 14.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1223-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**՝ բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:…

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա, գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում, ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութերի և արկղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>12.02.2020թ.</u>***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վիշկա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության համաձայն՝ քանի որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժակետ է սահմանվել 25.03.2020թ., և «Վիշկա» ՍՊԸ-ն մինչև 26.03.2020թ. ժամը 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել իր կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացրած հայտի ապահովման բնօրինակը, ուստի 08.04.2020թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Վիշկա» ՍՊԸ-ի հայտը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՍՑ-ՆԳ-2020/84 ընթացակարգի քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել

Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ապրանքների մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.04.2020թ. թիվ ՊՆ/ՊՆ/02/1304-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռք բերվելիք ապրանքները ներառված են ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով հրապարակվել է:

Միաժամանակ հայտնելով, որ վերոնշյալ ապրանքները ներառված են ՀՀ պաշտպանության նախարարության 2020թ. գնումների պլանում, որը հրապարակված է տեղեկագրում (gnumner.am)՝ «Գնումների պլաններ» բաժնում՝ http://www.gnumner.am/hy/page/petakan_karavarman_marminner/25 հղումով:

Այսպիսով՝ ինչ վերաբերում է գրությամբ վկայակոչված այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակում ձեռքբերվելիք ապրանքները ներառված են ՀՀ կառավարության 26.12.2019թ. N 1919-Ն որոշմամբ հաստատված N 10 հավելվածում, որը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում և կարգով հրապարակվել է, ապա սույն մասով հարկ եմ համարում նշել հետևյալը.

ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 4-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի կողմից գնումների պլանը հաստատվում է մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը՝ բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

Միաժամանակ 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված են այն դեպքերը, երբ գնումների պլանը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ առանձին հավելվածով:

Ընդ որում՝ որոշման 9-րդ կետով սահմանվում է, որ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում:

Վերը շարադրված իրավական նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ գնումների պլանի հաստատման վերաբերյալ բացառություն նախատեսվելու պայմաններում գնումների պլանի հրապարակման մասով բացառություն նախատեսված չէ, և Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 13.04.2017թ. N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 9-րդ կետով հստակ սահմանված է, որ գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում:

Միաժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***02.03.2020թ.***՝ ավելի ուշ, քան Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20-20/3» ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «Վիշկա» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Քանի որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն ընթացակարգի շրջանակներում քննության առարկա է դարձրել Պատվիրատուի կողմից տեղեկագրում գնումների պլանի հրապարակման հարցը, ուստի սույն որոշման շրջանակներում անդրադարձ չի կատարվում Ընկերության կողմից ներկայացված գրավոր դիրքորոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.04.2020թ. թիվ 26/26-1/5686-2020 գրությամբ «Վիշկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**